**Արձանագրություն N 3**

ԿԱՊ-16/5-ՇՀԱՊՁԲ-15/15 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք.Երևան 29 հունիսի 2016թ.

ժամը՝ 10:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կ.Հայրապետյան

Հանձնաժողովի անդամներ՝ Կ.Խեդոյան

Ռ.Բաբաջանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Հակոբյան:

**1. Բանակցությունների կազմակերպման մասին**

**(*Կ.Հայրապետյան*)**

Ընդունել ի գիտություն, քանի որ 2-րդ չափաբաժնի համար հայտ ներկայացրած և բավարար գնահատված կազմակերպության գնային առաջարկը գերազանցում էր տվյալ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը ուստի հանձնաժողովը որոշել էր՝

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 44-րդ կետի 5-րդ մասի բ ենթակետի համաձայն վերը նշված չափաբաժնի համար հաղթողին որոշելու նպատակով կասեցնել գնահատող հանձնաժողովի գնահատման նիստը և առաջարկված գների նվազեցման նպատակով, ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակիցների հետ միաժամանակյա բանակցություններ վարելու նպատակով նիստ հրավիրել 2016թվ.-ի հունիսի 29-ին ժամը 10:30-ին, բանակցությունների վարման համար ժամանակ սահմանել 15 րոպե:

Սահմանված ժամկետում գնային նոր առաջարկ չի ներկայացվել:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:**

**2. Չկայացած չափաբաժինները հաստատելու մասին**

**(*Կ.Հայրապետյան*)**

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ 1-ին չափաբաժինը հայտարարել չկայացած՝ հայտեր չեն ներկայացվել:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ 2-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած՝ պայմանագիր չի կնքվում:

***Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0:***

**3.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**

**(*Կ.Հայրապետյան*)**

ԿԱՊ-16/5-ՇՀԱՊՁԲ-15/15 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել սույն թվականի հունիսի 29-ին ժամը 11:00-ին <<Կարեն Եսայանի անվան պոլիկլինիկա>> ՓԲԸ-ի շենքում՝ հասցե ք. Երևան, Հ.Ներսիսյան 7, 2-րդ հարկ տնօրենի ընդունարան:

***Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0:***

Հանձնաժողովի նախագահ՝ Կ.Հայրապետյան

Հանձնաժողովի անդամներ՝ Կ.Խեդոյան

Ռ.Բաբաջանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Հակոբյան: